ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Անգլերենի ասացվածքների և դարձվածքների ուսուցման մեթոդիկա

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լ. Ալեքսանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՝ Սյունիքի մարզի Դարբասի միջնակարգ դպրոցի

ՂԵԿԱՎԱՐ՝ Վեներա Դավթյան

2023

Բովանդակություն

Ներածություն……3

Ասացվածքներն ու դարձվածքները անգլերեն
լեզվում……4

Անգլերեն լեզվի ասացվածքների և դարձվածքների ուսուցման մեթոդիկան
հանրակրթական դպրոցներում……6

Խմբի նկարագիրը……13

Փորձարարական դաս……13

Վերլուծություն և տվյալների
մշակում……14

Եզրակացություն……18

Գրականության ցանկ……20

Ներածություն

Ուսուցման գործընթացում հաջողություն հասնելու գրավականը ոչ միայն աշակերտների ընդունակություններն են, այլև ուսուցչի ուսուցման ձևը և ճիշտ մեթոդիկայի կիրառումը: Դրա մասին վկայում են բազնաթիվ ուումնասիրություններ: Ուսուցիչը ոչ միայն պետք է կարողանա գիտելիքներ փոխանցել աշակերտներին, այլև նպաստել, որ նրանք կարողանան այդ գիտելիքները կիրառել՝ զարգացնելով նրանց ստեղծագործ միտքը:

Անգլերենի դասաժամերին մի շարք ուսուցման մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս աշակերտներին միմյանց հետ քննարկել և վերլուծել ուսումնական նյութը և ստեղծել հետաքրքրիր և անկաշկանդ միջավայր, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունենա իր մտքերն արտահայտելու: Աշակերտ ուսուցիչ և աշակերտ աշակերտ փոխհամագործակցության ընթացքում աշակերտների մոտ զարգանում են միմյանց օգնելու, նոր հմտություններ և ստեղծագործ միտք ունենալու կարողությունները: Հետազոտության արդյունքում ցույց կտամ անգլերենի ասացվածքների և դարձվածքների ուսուցման մեթոդիկայի արդյունավետությունը 10-րդ դասարանում: Հետազոտական աշխատանքի նպատակն է.

•Ուսումնասիրել դարձվածքներն ու ասացվածքները անգլերեն լեզվում

•Ներկայացնել դարձվածքների և ասացվածքների ուսուցման դերն ու կարևորությունը որպես բառապաշարը հարստացնելու միջոց

•Ներկայացնել ուսսուցման տարբեր մեթոդներ և դրանց արդյունավետությունը

•Կատարել վերլուծություն փորձարարական դասի միջոցով

Ասացվածքներն ու դարձվածքները անգլերեն լեզվում

Դարձվածք (անգլ. idiom) կայուն բառ կամ բառակապակցություն, որը արտացոլում է ազգի սովորությունները, մշակույթը ու կենցաղը։

«Իդիոմ» բառը գալիս է հունարենից, որը նշանակում է «առանձնահատկություն», «օրիգինալություն»։ Դարձվածքների իմաստը հնարավոր չէ վերծանել՝ սահմանելով առանձին բառեր։

Դարձվածքաբանական միավորները և համակցությունները արտացոլում են Անգլիայի ժողովրդի դարավոր պատմությունը, նրա մշակույթի ինքնատիպությունը, ապրելակերպը և ավանդույթները։ Դարձվածքաբանական միավորները անգլերեն լեզվի խիստ տեղեկատվական միավորներ են (www.idiomconnection.com)։

Անգլերեն լեզվում կան դարձվածքների չորս տեսակներ՝ pure idioms (մաքուր դարձվածքներ), binominal idioms(երկանդամ դարձվածքներ), partial idioms(մասնակի դարձվածքներ) և prepositional idioms(նախադրյալ դարձվածքներ)։
Մաքուր դարձվածքները այն դարձվածներն են, որոնց իմաստը հնարավոր չէ պարզել դարձվածքի առանձին բաղադրիչներով։ Օրինակ, երբ ինչ-որ մեկն ասում է՝ “Break a leg” դա ոչ թե նշանակում է «Ոտքդ կոտրի՛ր» այլ տվյալ մարդուն հաջողություն է ցանկանում։ Սակայն դա հնարավոր չէ նկատել նայելով դարձվածքի յուրաքանչյուր բառին։

“Break a leg,” Tammy shouted as her daughter got ready to take the stage for her final scene.

Երկանդամ դարձվածքը արտահայտություն է, որը պարունակում է երկու բառ, որոնք միացված են շաղկապով կամ նախադասությամբ։ Օրինակ՝ “safe and sound”, որը նշանակում է «չվնասված, ապահով»։

The missing children were found safe and sound.

Մասնակի դարձվածքներն այն դարձվածքներն են, որոնց մի մասը օգտագործվում է փոխաբերական իմաստով, իսկ մյուս մասը պահպանում է իր ուղիղ իմաստը։ Օրինակ՝ “keep an eye on” նշանակում է «աչքը վրան պահել»։

We want Taylor in jail where we can keep an eye on him

Նախդրային դարձվածքները միավորում են բայը և նախդիրը՝ այլ իմաստով բայ ստեղծելու նպատակով: Օրինակ՝ “look after” նշանակում է ինչ-որ բանի մասին հոգ տանել:

He helps to look after his grandfather who is an invalid.

Մեկ այլ սահմանմամբ դարձվածքը կայուն լեզվական միավոր կամ արտահայտություն է, որը հատուկ է կոնկրետ լեզվի և մշակույթի:

Դարձվածքները չի կարելի շփոթել խոսքի պատկերավորման միջոցների հետ ինչպիսին է օրինակ փոխաբերությունը, որ անուղղակի համեմատությունների միջոցով ավելի արտահայտիչ է դարձնում պատկերը, օրինակ՝ a man of steel նշանակում է պողպատի պես ամուր մարդ:

Խոսքի պատկերավորման մեկ այլ միջոց է համեմատությունը (անգլ. simile), որը վերաստեղծում է պատկերը կատարելով փոխաբերական զուգորդություններ, օրինակ՝ faster than a speeding bullet (կայծակնային արագությամբ, չափազանց արագ): Բառային թարգմանությունը կլինի ավելի արագ, քան սլացող փամփուշտը: Իսկ չափազանցության դեպքում չափազանցված են ներկայացվում որևէ առարկայի հատկանիշները, օրինակ՝ missed by a mile (քար գցելու հեռավորության վրա):

Դարձվածքները չպետք է շփոթել ասացվածքների հետ, որոնք պարզ արտայտություններ են՝ հիմնված ճշմարտության և մարդկանց անձնական փորձի վրա (https://shorturl.at/nswF1)

Առածներն ու ասացվածքները ժողովրդական մտքի , վերաբերմունքի, բարոյական արժեքների արտացոլումն են: Դրանք ունեն նմանատիպ այլ լեզուներով տարբերակներ,, քանի որ դրանք վերատադրում են «պարզ ճշմարտությունները», որոնք բնորոշ են յուրաքանչյուր ազգի ցանկացած մարդու:
Առածը կարող է ունենալ այլ պատկերներ, սակայն կփոխանցի նույն իմաստը:

Անգլերենի բնիկ ասացվածքները ստեղծողները մնում են անհայտ: Ժողովրդի կողմից ստեղծված այսպիսի լայն տարածման օրինակներ են՝ “Love me, love my dog”- Սիրիր ինձ, սիրիր նաև իմ շանը, “Two heads are better than one”- Մի խելքը լավ է, երկուսն ավելի, “Better late than never”- Ավելի լավ է ուշ, քան երբեք, “Old friend and old fine are the best”- Մի հին ընկերը, երկու նոր ընկերներից լավ է, “A man is known by the company he keeps”- Ասա ով է ընկերդ, կասեմ ով ես դու, “A friend in need is a friend in deed”-Ընկերը նեղության մեջ է ճանաչվում, “A goose is not a playmate for a pig”-Տարբեր մարդիկ չեն կարող ընկերներ լինել, “Friend are alright when they don’t interfere with your career”- Գործը՝ գործ, ընկերությունը՝ ընկերություն, “Lend your money and lose your friend”-Ուզում ես ընկերոջդ կորցնել, նրա պարտքով փող տուր: (https://shorturl.at/gzW49)

Անգլերեն լեզվի ասացվածքների և դարձվածքների ուսուցման մեթոդիկան հանրակրթական դպրոցներում

Դարձվածքային միավորները ճիշտ օգտագործելու համար նպատակահարմար է դասապրոցեսի ընթացքում կիրառել դերասյուժետային խաղեր, գծագրական դասակարգիչներ, ինտերակտիվ առաջադրանքներ ստեղծելով համապատասխան իրավիճակներ դրանք տարբեր իրական խոսքային իրավիճակներում գործածելու համար: Անգլերենի դարձվածքների ուսուցանումը առավել գրավիչ է գունավոր, պատկերավոր քարտերի միջոցով, որոնք պատկերում են դարձվածքի բառացի իմաստը՝ ստեղծելով իմացական դիսոնանս, որը նպաստոեւմ է դարձվածքի էֆֆեկտիվ մտապահմանը: Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ է նախօրոք տպած պատկերների պաշար կամ կրիչ համակարգչով կամ ինտերակտիվ գրատախտակով ցուցադրելու համար: Ուսուցանման այս տարբերակը ավագ դպրոցի աշակերտների ամենանախընտրելին է, քանի որ աշակերտները տպավորվում են զվարճալի, թեմատիկ նկար քարտերով: Նման ուսուցանումը կատարվում է շաբաթը մեկից 1-2 անգամ, յուրաքանչյուր անգամ տրամադրելով 10-30 րոպե:

Նախորդ թեման ամրապնդելու համար ուսուցիչը ցուցադրում է 2-5 քարտ արդեն ծանոթ դարձվածքների պատկերով և առաջարկում բազմակի ընտրության(multiple choice activity) միջոցով ընտրել ճիշտ տարբերակը: Առաջադրանքը կատարվում է անհատական և խմբային աշխատանքի տարբերակով: Հաջորդ քայլը ամրապնդող առաջադրանքներն են՝ լրացնել բաց թողնված բառերը (cloze passage).

Անհրաժեշտ է պարբերաբար սովորողներին ուղղել հարցեր և խրախուսել նրանց գտնել հայերենում անգերեն դարձվածքների համարժեքները:

Որպես տնային աշխատանք աշակերտներին հանձնարարվում է գրել կարճ էսսե կամ թեմատիկ շարադրություն օգտագործելով 5 նոր, 5 արդեն յուրացված դարձվածք:

Փոքրիկ պատմվածքներ և համատեքստային աշխատանք է առաջարկում հետևյալ կայքը (http://www.englishdaily626.com), որտեղ յուրաքանչյուր դարձվածք օգտագործված է երկխոսություններում և կարճ պատմություններում Օրինակ՝ It's raining cats and dogs նշանակում է it is raining hard.

Աշակերտների մոտ անգլերեն դարձվածքների և ասացվածքների ուսուցանումը ավելի դյուրին և հետաքրքիր դարձնելու համար, օգտագործել եմ մի շարք մեթոդներ և վարժություններ, որոնք կներկայացնեմ ստորև.

Մտածի՛ր, զուգորդի՛ր, մտքեր փախանակի՛ր

Այս վարժությունը արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որը օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նաևօրոք թեմայի շուրջ հարցեր է պատարստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն (երկակի պատասխան են ենթադրում) աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում փորձելով գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է իրենց երկուսի

պատասխանները (գաղափարները): Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Հինգ րոպեանոց շարադրանք

Հինգ րոպեանոց շարադրությունը օգտագործվում է դասի վերջում, որպեսզի աշակերտներին օգնի ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իրենց մասերը և ուսուցիչներին առավել հստակ պատկերացում տա դասի մտավոր ներգործության վերաբարյալ: Աշակերտներից պահանջվում է գրել, թե ինչ սովորեցին այս դասանյութը ուսումնասիրելիս և գրեն նաև դասանյութի վերաբերյալ մի հարց, որի պատասխանը դեռ չգիտեն:

Ազատ շարադրանք

Մինչ նոր նյութին անցնելը, աշակերտներն ազատ շարադրում են, թե ինչ գիտեն կամ կուզենային իմանալ տվյալ նյութի մասին:

Կանխատեսումներ զույգերով

Նոր դասանյութից (մինչ այն ներկայացնելը) ընտրում են 5-6 բառ, գրում գրատախտակին և ուշադիր կարդում այդ բառերը: Տվյալ բառերը վերցված են դասանյութից: Աշակերտները իրենց զույգի հետ պետք է կանխատեսումներ անեն, թե դասանյութը ի՞նչ թեմայի մասին կարող է լինել և այդ բառերը ինչպես են օգտագործված դասանյութի մեջ: 5 րոպե տրամադրվում է քննարկումների և գրառումների համար: Իրենց գրառումներին նրանք պետք է անրադառնան դասանյութը ընթերցելուց հետո: Ասեն, թե իրենք ճիշտ էին կանխագուշակել, թե ոչ:

Մտածել, զույգ կազմել, հաղորդել (Think/ Pair/ Share)

Այս մեթոդը ներառում է հետևյալ քայլերը.

1.Աշակերտներին խորհրդածելու համար մի որոշակի ժամանակ տալով ինքնուրույն մտածելու:

2. Առաջարկել թեման քննարկել զույգերով:

3. Առաջարկել, որ զույգերն իրենց քննարկման արդյունքները ներկայացնեն,ամբողջ դասարանին: Ի հավելումն քննարկման աշակերտներին առաջարկել զույգերով աշխատելու փուլում կիրառել մտածողության տարբեր տեսակներ՝ փոխհամաձայնություն հիմնախնդրի վերաբերյալ, խնդրի լուծում կամ բանավեճ հակադիր տեսակետների շուրջ:

4. Որպես մեկ այլ տարբերակ զույգերից մեկին առաջարկվում է ստանձնել «փորձագետի» դերը: Վերջինս «նորեկին» բացատրում է նոր նյութի բովանդակությունը: «Փորձագետը» պետք է այնպես խոսի նոր նյութի մասին, որ թեմային անտեղյակ կամ անծանոթ մարդը կարողանա հասկանալ այն: Անծանոթ գաղափարները կամ բառերը պետք է թարգմանվեն՝ «նորեկին» բացատրելու համար: «Նորեկը» հարցեր է տալիս՝ միտքը պարզելու և «փորձագետի» համար կրկնում լսելու կարողության զարգացմանը:

Խթանման փուլի գլխավոր նպատակն է օգնել աշակերտներին իմի բերել դասանյութի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները, շարժել նրանց հետաքրքրությունը և

նպատակադրել սովորել նորը: Բազմազան են խթանման փուլում օգտագործվող վարժությունները, որոնցից ուսուցիչը ընտրություն կատարելու մեծ հնարավորություն ունի: Արդյունավետ խթանման վարժությունները կնպաստեն ակտիվ ուսումնառությանը: Ստորև ներկայացնում եմ մի քանի վարժություններ

Խմբավորում

Սա վարժություն է, որը սիրով կատարում են գրեթե բոլոր աշակերտները: Այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Աշակերտները կատարելով այն հնարավորություն են ունենում տեղեկանալու իրենց

ունեցած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերին: Խմբավորումը ներկայացնելիս նկարագրվում են խմբավորման քայլերը՝

•Գրել թեմայի հետ առնչվող որևէ առանցքային բառ գրատախտակի կամ թղթի

կենտրոնում:

•Ստագրոհի միջոցով գրել այդ բառին առնչվող բառերն ու արտահայտությունները:

•Գաղափարների գրելը ավարտելուց հետո գծիկներով միացնել այն բառիրը,

որոնք իրար հետ առնչվում են:

•Հնարավորին չափ շատ մտքեր գրել մինչ դրանք կամ տրված ժամանակը կսպառվի:

Առաջին անգամ այս վարժությունը ներկայացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամների համար հոգեհարազատ լինի: Այն մեկ անգամ խմբով կատարելուց հետո աշակերտները այնքան են հմտանում, որ կարողանում են կատարել ինչպես փոքր խմբերով, այնպես էլ անհատական:

Մտագրոհ կամ մտքերի տարափ

Մտագրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների

ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները, գրի է առնվում գրատախտակին: Ամեն միտք, թեկուզ անվստահ և վախվորված խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին ա նել որևէ քննադատություն կամ տալ գնահատական: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում

է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո, ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ խմբով քննարկվում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնությունները քննարկում, շտկում: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «հայտնաբերելն է»:

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման այս ձևը ժողովրդավարական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է:

Փոքը խմբերում ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

•Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը

•Ձևավորում է հաղորդակցման հմտություն

•Աշակերտները սովորում են միմյանցից

•Զարգացնում է աշակերտի պատասխանատվության զարգացումը,

•Միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում

•Խթանում է թիմային աշխատանքը

Խմբի տեսակները

Խմբերի 2 հիմնական տեսակներ կան համասեռ և տարասեռ: Համասեռ խմբով աշխատելու պարագայում ուսուանական ձեռքբերումների միննույն մակարդակն ունեցող աշակերտները աշխատում են իրար հետ: Այս ձևը նպատակահարմար է կիրառել ոչ ֆորմալ , կարճաժամկետ գործունեության համար

նախատեսված խմբերի դեպքում: Առավել արդյունավետ է տարասեռ խմբերով աշխատանքը: Այս դեպքում խմբերում աշխատում են ուսումնական հաջողությունների տարբեր մակարդակ ունեցող աշակերտներ:

Փոքր խմբերով աշխատելու հնարները

Փոքր խմբերով աշխատելու հնարներ մեծ մասամբ համագործակցային են: Ներկայացված են նաև մրցակցային հնարներ, որոնք օգնում են պարզելու համագործակցության արդյունավետության աստիճանը:

Մտածիր զույգ կազմիր քննարկիր

Սա բավական պարզ, բայց արդյունավետ մեթոդական հնար է, որը նպաստում է աշակերտի մտածական հմտությունների զարգացմանը, նոր գաղափարների ի հայտ գալուն: Առաջին փուլում աշակերտները անհատապես մտածում են առաջադրանքը շուրջ: Երկրորդ փուլում իրենց տեսակետը քննարկում են դասարանի աշակերտներից որևէ մեկի հետ: Երրորդ փուլում նրանք իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին:

Ձնակույտ

Այս մեթոդական հնարն ունի նախորդի տրամաբանությունը: Պարզապես, այս դեպքում զույգերով աշխատելուց հետո, արդեն երրորդ փուլում, աշակերտները իրենց տեսակետը ներկայացնում են ոչ թե ամբողջ դասարանի, այլ շարունակում են աշխատել իրենց խմբում:

Համագործակցային փոխուսուցում

Այս հնարի էությունն այն է, որ սովորողները փոխադարձաբար աջակցում են ստուգելով աշխատանքները, համատեղ կատարելով տնային աշխատանքները, իրար սովորեցնելով ուսումնասիրվող թեմաները:

Փոքր խմբերով աշխատանքի առավելությունները

•Խթանում է բանավեճը դասի ընթացքում

•Խրախուսում է մասնակցությունը

•Ուսուցման գործընթացում սովորողը ակտիվ է

•Դասարանում ձևավորվում է համագործակցային ուսուցման մթնոլորտ

•Ստեղծում է մրցակցության մթնոլորտ

Խմբի նկարագիրը

10-րդ դասարանում սովորում են 4 աշակերտներ (2 աղջիկ և 2 տղա)

Ուսուցիչ՝ Լ. Ալեքսանյան

Փորձարարական դաս

Հետազոտության առաջին փուլ. Բացահայտել նյութի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները:

Աշակերտները ներկայացնում են անգլիական ասացվածքներ՝ անգլերենով: Ներկայացրին տվյալ ասացվածքների հայկական համարժեքները նկարների միջոցով և թարգմանությամբ: Վերլուծվել են 12 ասացվածքներ: Դրա համար անհրաժեշտ էր բառ առ բառ անգլերեն թարգմանել ասացվածքները և գտնել դրանց անգլերեն համարժեքները՝ այսինքն համապատասխանությունը:

Հետազոտության երկրորդ փուլ. Դասակարգվել են բոլոր 12 ասացվածքները, որոնց հիմքում ընկած էին անգլերեն առածների և ասացվածքների հայերեն թարգմանության առանձնահատկությունները ըստ նրանց բառապաշարի։

Մտագրոհի օգնությամբ ուսուցչի դերը պատասխաններն ուղղորդելն էր և դրանք գրանցելը։

Խթանման փուլի ընթացքում աշակերտները ներգրավված էին քննարկվելիք նյութի մեջ և բավականին ակտիվ էին։ Աշակերտների մեջ նկատելի էր շահագրգռվածություն և գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու ձգտում։

Իմաստի ընկալման փուլում ապահովված էր տեղեկատվության ընկալման ինքնավերահսկումը, հետաքրքրասիրության աչքի պահպանումը, հին ու նոր տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը։

Կշռադատման փուլում ուսուցչի կողմից օգտագործված մեթոդները (ավանդական, հարցադրման, մտագրոհ և այլն) օգնեցին, որպեսզի աշակերտները հանրագումարի բերեն իրենց գիտելիքները՝ յուրացնելով նոր գիտելիքներ, դրանք դարձնելով իրենց սեփականությունը։ Աշակերտները անհատական և զույգերով գրատախտակին ներկայացրին դարձվաքները և ասացվածքները։ Աշակերտները անկաշկանդ արտահայտեցին իրենց իմացած, ապա ամբողջ խմբով քննարկեցին, լրացրին և շտկեցին անհամաձայնությունները։

Մտագրոհ կամ մտքերի տարափ. Մեթոդի կիրառումը (ուսուցչի կողմից), աշակերտներին ուղղված հարցադրումները (հարցադրման մեթոդ) և հայտորոշիչ թեստերի միջոցով աշակերտների գիտելիքների ստուգումը արդյունավետ էր, ուսանելի և հետաքրքիր։ Սովորողների ստացած գիտելիքները ստուգելու և ամփոփելու համար օգտագործված հարցադրումները կատարվեցին փակից դեպի բաց սկզբունքով։

Վերլուծություն և տվյալների մշակում

Հետազոտման փուլում կիրառվել են հարցադրման մեթոդներ, հայտորշիչ թեստեր

(մուտքի քարտ, ելքի քարտ), ավանդական մեթոդների զուգորդմամբ արդյունքում ստացվեց յուրացումը: Ողջ դասապրոցեսի ընթացքում ապահովված էր երեխաներրիի ներգրավվածությունը: Դպրոցում փոքրաքանակ խմբերով (4 հոգուց բաղկացած դասարաններում) խմբային աշխատանքը կատարվում է զույգերով: Առաջին դասին մասնակցեցին և ակտիվ ներգրավվածություն ունեին բոլոր 4 աշակերտները: Կիրառվել է ավանդական մեթոդը: հաջորդ դասին կիրառվել է հարցադրման մեթոդը: Մեթոդը նոր էր, սակայն աշակերտները հաջողությամբ կարողացան պատասխանել բոլոր հարցերին՝ ապահովելով թեմատիկ բառերն ու արտահայտությունները: Երրորդ և չորրորդ դասերին կիրառվել են հայտորշիչ թեստեր: Կարդում էին ճիշտ առոգանությամբ և հնչերանգով, պատասխանում էին առաջադրված հարցերին և ապահոված էր աշակերտների ներգրավվածությունը հետազոտության բոլոր փուլերում: Հետազոտությունը ցույց է տվել, որ աշակերտների 50%-ը ակտիվ ներգրավվածություն են ցուցաբերում դասի ընթացքում, աշխույժ էին, հետաքրքված թեմայով: 25%-ը մեծ աշխուժություն և ակտիվությունը չէր ցուցաբերում, բայց պատասխանում էր հարցերին, իսկ 25%-ը պասիվ էր:



Կից ներկայացված են թեմայի շրջանակներում աշակերտների աշխատանքները.









Կիրառելի աշխատաթերթի նմուշների օրինակներ աշակերտների մոտ հմտությունների զարգացման նպատակով օգտագործելու համար։



Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում հանգեցի հետևյալ եզրակացություններին.

Հայերեն և անգլերեն ասացվածքների և դարձվածքների տարբերությունները բնութագրավում են ազգային հատկանիշներով մշակութային, պատմական, կենցաղային։ Օգտագործելով այս կամ այն դարձվաքը կամ ասացվածքը սովորողը փորձում է ընդգծել դրա էությունը։ Անգլերենի ասացվածքների և դարձվածքների ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է ունենալ բարձր արդյունավետություն, եթե ուսուցումը զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով։ Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից աշակերտների պահանջմունքները, կարծում եմ, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն, բանակցեն ու ինքնադրսևորվեն։

Ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով։ Կարևոր եմ համարում նաև այն միջավայրը, որում աշակերտը իրեն ապահով ու հանգիստ կզգա, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ։ Դասի ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի բոլոր սովորողների պահանջմունքներն առանձին-առանձին։ Քարտային կամ անհատական առաջադրանքները կարող են կազմվել մի քանի բովանդակային մակարդակներով, որպեսզի բավարարեն հետ մնացող սովորողներին ևս, եթե կան այդպիսիք։ Ինչու չէ կարևոր է նաև բարոյահոգեբանական միջավայրը.

յուրաքանչյուր սովորող պետք է դասի ընթացքում իրեն կարևոր զգա:

Ուսումնասիրելով համագործակցային ուսուցումը, դրա նպատակներն ու խնդիրները և կիրառման մեթոդները, եկա այն եզրակացության, որ ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ և հետաքրքիր կդառնա, եթե այդ ընթացքում կիրառվեն ուսումնառության համագործակցային մեթոդները: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց ճանաչողական կառույցները հմտությունները՝ խոսելու, բացատրելու, բանակցելու, բանավիճելու և հարցեր տալու, դրանց պատասխաններն անելու միջոցով:

Այս ամենը սովորողների մոտ ձևավորում և զարգացնում է այն հմտությունները, որոնք նրանց կօգնեն ինքնադրսևորվել կյանքի տարբեր փուլերում և իրավիճակներում:

Գրականության ցանկ

1.Activate: Games for Learning American English

2.https://www.turito.com/learn/english/idioms-grade-9

3.https://wordsinasentence.com/break-a-leg-in-a-sentence/

4.https://sentencedict.com/safe%20and%20sound.html

5.https://idioms.thefreedictionary.com/

6.Dictionary idiomatic calgues: A. Sarkisyan N. Karapetyan

7.Five-Minute-Activities- A resource book of short activities (Cambridge Handbook for language teachers)

8. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Դասի պլաններ

Դասի պլան 1

Դասարան-9-րդ դասարան

Ամիս, ամսաթիվ 15.09.23

Առարկա-Անգլերեն

Ուսուցիչ- Լ. Ալեքսանյան

Դասի թեմա-Փոխաբերություններ, դարձվածքներ

Դասի տիպը-Ինտեգրված դաս

Դասի նպատակը-Հաղորդել տեղեկություններ դարձվածքների վերաբերյալ, ծանոթացնել սովորողներին օտար լեզվի դարձվածքներին: Քննարկել տարբեր լեզուների միջև կապը: Ընդլայնել աշակերտների գիտելիքները դարձվածաբանական կառույցների մասին՝ ընդգծելով դրանց դերը գրավոր և բանավոր խոսքում:

Դասի վերջնարդյունքները- Սովորողները կիմանան դարձվածքների մասին, կսովորեն հայերեն և անգլերեն դարձվածքներ, կհասկանան դրանց իմաստը, կկիրառեն դրանք սեփական խոսքում, կհարստացնեն բառապաշարը, կկատարեն համամատություն այլ լեզուների հետ։

Կապը ՀՊՉ-ի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ։ Հ3, Հ30, Հ32, Հ42, Հ44, Հ45, Հ46

Առաջարկվող գործունեության ձևեր

1) Պաստառ «Դարձվածքներ, փոխաբերություններ»

2) Տեսահոլովակի դիտում, քննարկում

Խաչվող հասկացություններ-Դարձվածքների ճանաչում, նոր դարձվածաբանական բառերի, արտահայտությունների և մշակույթների ծանոթանալու հնարավորություն։

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու-Ներկայացնել դարձվաքների օրինակներ

Թվային գրագիտություն-Պատրաստել պաստառ «Հայերենի և անգլերենի դարձվածքները» թեմայով։

Դասի պլան 2

Դասարան-10-րդ դասարան

Ամիս, ամսաթիվ 18.09.23

Առարկա-Անգլերեն

Ուսուցիչ- Լ. Ալեքսանյան

Դասի թեմա-Weather and climate

Unit 1-Tourist’s season

Դասի նպատակը-Խորացնել աշակերտների գիտելիքները դարձվածքների և փոխաբերությունների մասին, զարգացնել ունկնդրելու և հասկանալու կարողություններ: Ուշադրություն դարձնել դարձվածքների թարգմանությանը և բարձրացնել աշակերտների շահագրգռվածությունը (մոտիվացիան): Կապել հաղորդվելիք ուսումնական նյութը աշակերտների ունեցած փորձի հետ: Ծանոթացնել Մեծ Բրրիտանիայի ժողովրդի ազգային մշակույթին և պատմությանը: Հաղորդակցական կարողությունների զարգացում, օտարալեզու խոսքի ձևավորում: Ուշադրություն դարձնել բառերի և արտահայտությունների ուղղագրությանը և ճիշտ արտասանությանը: Գրավոր և բանավոր խոսքի զարգացում:

Վերջնարդյունքներ-Աշակերտները կծանոթանան տարբեր դարձվածքների, կհարստացնեն բառապաշարը, կտեղեկանան դարձվածքների ծագման և տարբեր լեզուներում դրանց կիրառման և կարևորության մասին: Կկարողանան պատրաստել գեղեցիկ գրված, գունավոր պաստառ հանձնարարված թեմային համապատասխան:

Առաջարկվող գործունեությաան ձևեր.

1) Սահիկաշար՝ պաստառ «դարձվածներ, ասացվածքներ»

2) Կարճ զեկույց՝ «Դարձվածքները և ասացվածները հայոց լեզվում և անգլերեն լեզվում»

Խաչվող հասկացություններ

Ժամանակ և տարածություն

Արտահայտությունների միջոցով մշակույթներին ծանոթանալու հնարավորություն:

Միջառարկայական կապեր-Հայոց լեզու, Թվայիին գրագիտություն, Ռուսաց լեզու, Համաշխարհային պատմություն:

Կապը ՀՊՉ-ի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ: Մ1 , Մ2, Հ11, Հ12, Հ15, Հ23, Հ25, Հ26, Հ29, Հ39, Հ40:

Դասի պլան 3

Դասարան-11-րդ դասարան

Ամիս, ամսաթիվ 25.09.23

Առարկա-Անգլերեն

Ուսուցիչ- Լ. Ալեքսանյան

Դասի թեմա-Culture check: Break a leg; English Idioms

Նպատակը-Զարգացնել կարդալու, գրելու, ուկնդրելու և խոսելու հմտություններ։ Աշակերտները պետք է գիտակցեն, որ դարձվածքները լեզվամշակութային կարևորություն են հանդիսանում յուրաքանչյուր լեզվում։ Խորացնել օգտագործված դարձվածքների ուսուցումը։ Մեկնաբանել դասը, պարզաբանել, թե ինչ նշանակություն ունի դասի վերնագիրը և դասում ներկայացված դարձվածքը։ Կենտրոնանալ դարձվածքներում օգտագործված բայերի, գոյականների, ածականների և այլ խոսքի մասերի վրա, վերհիշել և ամրապնդել դրանք։ Ամփոփել քերականական գիտելիքները, զարգացնելով հաղորդակցակն կարողություններ։

Խնդիրներ.

1) Տալ համապատասխան թեմային վերաբերող տեքստեր

2) Հանձնարարել տեքստից դուրս գրել դարձվածքները և դրանք օգտագործել խոսքի մեջ։

3) Հանձնարարել աշակերտների կազմակերպել հետաքրքիր խաղ՝ օգտագործելով դարձվածքներուրում օգտագործված խոսքի մասերը։

Վերջնարդյունքներ-Աշակերտը կիմանա և կսովորի դարձվածներ, ասացվածքներ լիարժեք կտարբերի խոսքի մասերը և կիմանա դրանց թարգմանությունները, կհարստացնի բառապաշարը նոր դարձվածքներով։

Առաջարկվող գործունեության ձևեր.

1) Աշխատանք քարտերով, նկարներով

2) Պաստառ «Դարձվածքներ»

Խաչվող հասկացություններ-Զարգացում- Դարձվածքային արտահայտությունները աշակերտի բառապաշարի զարգացման գրավական։

Միջառարկայական կապեր-Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Թվային գրագիտություն։

Կապը ՀՊՉ-ի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ։ Մ1, Մ2, Մ11, Մ12, Մ15, Մ23, Մ25, Մ26, Մ29, Մ39, Մ40։

Տնային աշխատանք-Սովորել դարձվածքներ և փոխաբերություններ, դուրս գրել դարձվածքաբանական արտահայտություններ համացանցից։